

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



20.0004 - XXX - АСМ ИК





#197

792

7-48

β

713

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ  
**Հ Ա Ս Մ Ի Կ Ի**  
ԲԵՄԱԿԱՆ ՅԵՎ ՀԱՍԱՐՍԱԿԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ 30-ԱՄՅԱԿԸ

1009  
39757

4017



30- ЛЕТИЕ СЦЕНИЧЕСКОЙ И  
ОБЩЕСТВЕННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ  
НАРОДНОЙ АРТИСТКИ  
**А С М И К**

ՅԵՐԵՎԱՆ

մայիս 1936 май

Эривань



## Հ Ա Ս Մ Ի Կ



Ժողովրդական դերասանուհի Համիկ Հակոբյանը սերվել է Հին Նախիջեվանի գեղջկական ընտանիքից: Ըստ նախնյաց սովորության նրան որոնցի սեջ նշանել են: Յերբ 6—7 տարեկան է դառնում, նրան ցերեկը հագիվ կարողանում են տուն տանել: Ամբողջ որը «գլուխը խաղի յեր տալիս». նա «գժի նման» սիրում էր մագցեղ ծառերը: Տանեցիք արդեն գիտեյին, վոր յերե նա բակում կամ փողոցում չէ, ուրեմն՝ վորեվե ծառի նյուղի վրա նսած կլինի: Մի որ հայրը նրան հարկադրաբար իջեցնում է ծառից ու ձեռքից բռնած դպրոց տանում: Կարն ժամանակում նա դրպրոցում ձեռք է բերում չարաննի աղջկա մի այնպիսի համբավ, վորից

գանգասվում էյին բոլորը: Փայլփլուն աչքերով ու գանգուր մագերով յերեխան դառնում է դպրոցական յերեկույթների զարդը, վորովնեհեվ համարձակ կերպով էր արտասանում:

Այդ երջանում դերասան Սաճրագյանի խումբը Հին Նախիջեվան գնալով՝ նրան բեմ է դուրս բերում տասը խումբ ունեցող մի դերում: Այդ նրա առաջին թատերական յերույթն էր: Սաճրագյանն առանձին գոհունակությամբ է արտահայտվում «կրակի կտոր» աղջկա ընդունակության մասին: 12—13 տարեկան հասակում չէր լինում դպրոցական մի ներկայացում, վորին Հասմիկը չմասնակցեր: «Շուշանիկ» պիեսում նա խաղացել է Շուշանիկի դերը, իսկ «Արեակ 2-րդ»-ում յեվ «Թուղթ խաղացողի կյանք»-ում տղաների դերերը:

Յեվ հին սովորությունն ու, մանավանդ նրա գեղեցկությունից առաջացած յերկյուղը հարազաններին ստիպում է 14 տարեկան հասակում ամուսնացնել նրան իրենից տարիքով շատ մեծ մի համագյուղացու հետ, վորը աշխատում էր Թիֆլիսում: Լուրեր էյին պսսվում, վոր

Պատասխանատու խմբագիր Ս. Մելիսեթյան.  
Շապկի նկարը ժող. նկարիչ Մ. Սարյանի.  
Տեխնիկական ձեվավորումը Մ. Սփրիկի.  
Սրբագրիչ՝ Սարենիկ Շահբաղյան.  
Գլավիտ թիվ 2119. Պատկեր թիվ 624. Տիրաձ 500.  
Պետրոսի տպարան, Յերեվան.

Հասմիկին ուզում են փախցնել: Շսապ կասարված ամուսնաթյունից հետո ամուսինը նրան անմիջապես Թիֆլիս է տեղափոխում:

Թիֆլիսը վառում է նրա ապագան:

Ամուսինը Թիֆլիսի ակումբներից մեկի ավագների խորհրդի անդամ է: Նրա միջոցով Հասմիկը կապվում է ակումբի հետ յեվ դառնում նրա ընտանեկան յերեկույթների-ներկայացումների մեսական հանախորդը: Նրա գլխից չէյին հեռանում դպրոցական ներկայացումներից մնացած ջերմ հուշերը, մանավանդ վոր այդ հուշերը հրահրող պատճառներ կային, այն է՝ ակումբի քասերական ներկայացումները: Յուրաֆանչյուր ներկայացումը նրա սիրքը յցնում էր յաղալու անհագ ցանկությունով: 1904 թ. ծանոթանալով ակումբի հայ դրամասիկ յամբում աշխատող դերասան Վանեիրի հետ, յսնորում է յրեն դերեր հանձնել ընտանեկան յերեկուներին յաղալու համար: Վանեիրը համաձայնում է, յսկ յստաբարո ամուսինն ազգելում: Խաղալու տենչանքը անդիմադրելի չափի յե հասնում: Վանեիրի յեվ ուրիշների յեռանդուն միջնորդության շնորհիվ, Հասմիկը կարողանում է ամուսնու համառությունը մեղմացնել: Ամուսինը, սակայն, սի պայման է դնում, վոր Հասմիկը յերբեք դերահաս կնոջ դերերում հանդես չգա: Մինչեվ ամուսնու մահը (1906) Հասմիկը սխալված է յինում յոստումը չդրժել: Պատավ կնոջ դերերը դարձել էյին նրա ամպուան:

Թիֆլիսում նա դերասան Միքայելի ռեժիսյորությամբ առաջին անգամ յաղացել է «Քանդված ոչախում» Քալիի դերը: Նրա ընդունակությունը տեսնելով դերասանները յորհուրդ են տալիս յրեն վերջնականապես նվիրելու բեմին: Այդ, յհարկե, Հասմիկի միակ յղձն էր, բայց բոֆախսավոր ամուսնուն դառնացնել չեր ուզում: 1906 թ. նա ծանոթանում է ժողովրդական դերասան Արեյանի հետ, վորին յեվ ամուսնու մահից հետո դիմում է յրեն հայ դրամասիկ ընկերության յամբի կազմի մեջ ընդունելու: Արեյանը յոստանում է Հասմիկին աջակցություն ցույց տալ: Ու նույն թվին նա հրավիրվում է Թիֆլիսի Հայ Դրամասիկ Ընկերության յումբը:

Նա արդեն դերասանուհի յեր յեվ յր վասակով պահում էր վորբացած չորս յերեխային: Հասմիկը մեր այն դերասանուհիների թվին է պատկանում, վորոնք մեծ հանույթով ու առանձին հակումներով մասնակցում էյին



ժողովրդական հանրամասչելի ներկայացումներին: Թասրոնի նկատմամբ աշխատավորական յավերի ունեցած յորունկ սերը Հասմիկը յր արտասական գործունեյության ընթացում շատ բարձր էր գնահատում: 1904—5 թվերին յրբեվ սիրողուհի մասնակցել է Հավարարի յեվ Մուրաշկոյի քասրոնների ժողովրդական մասչելի ներկայացումներին: Իսկ 1909, 10 թ., յերբ նախկին Զուբարովի անվան ժողովրդական Տանը մի յումբ սիրողների յեվ դերասանների միջոցով կազմակերպվում է հայ դրամասիկ սեկցիա (քասրոնում ուրիշ ազգությունների դրամասիկ սեկցիաներ էլ կային), դերասանուհի Հասմիկը առաջիններից սեկն է յինում, վոր անմիջապես առձագանձում է հոգոտ այդ ձեռնարկության սեղծման տված կոչին, դառնալով նոր գործի հիմնադիրներից մեկը: Ժողովրդական Տան դրամասիկ սեկցիան նպատակ էր դրել ժողովրդական յայն յավերի համար էժանագին ներկայացումներ կազմակերպել (5—50 կ.): Արտասական քասրոնի ներկայացումներից գատ, Հասմիկը, սեկցիայի հիմնադրման ուրից, առանց վարձատրության սկսում է մասնակցել ժողովրդական Տան ներկայացումներին: Կարն ժամանակամիջոցում Հասմիկը դառնում է քասրոն հանախող աշխատավորության ամենասիրելի դերասանուհին: Հասմիկը քիչ գրկաններ չի կրել այդ նոր գործի համար, սակայն յերբեք չի վհասվել:

Իր բովանդակ յեռանդը նվիրելով այդ քասրոնին, նա տարիների ընթացում հարագատի նման վայրփայել է նրա նպատակները: Մինչեվ 1918—19 թ.թ. նա յերբեք չզավանանեց ժողովրդական Տանը գործող անձնվեր սիրող—դերասանների յամբին, մեծելով միշտ այլ յեվ այլ ֆաղանների քասրոնների վարչություններից հանախ առաջարկվող հրապուրիչ պայմանները:

1919—20 թ.թ. բոֆախսով հիվանդ աղջկա պատճառով նա մեկնում է Բաթում յեվ մի ամբողջ քասերաւերջան այնտեղ աշխատելուց հետո 1920 թ. ամառը աղջկա հետ

գնում է Դիլիջան: Դիլիջանում աղջիկը վախճանվում է: Յերբ Դիլիջանը խորհրդայնացանում է, Հասմիկը իսկույն դիմում է Հեղկումին, խնդրելով իրեն իբրեւ դերասանուհու ոգսագործել Դիլիջանի բասերական գործի կազմակերպման համար: Նրա առաջարկը Հեղկումի դեկավարները ընդունում են մեծ ուրախությամբ յեւ անվանի դերասանուհուն նշանակում են Դիլիջանի յեւ նրա Երջանի բասերական աշխատանքների դեկավար: Հասմիկը խորհրդային Հայաստանում առաջին բասերական գործիչներից մեկն է լինում, վորն իր ուժերը ի սպաս է դնում հեղափոխական աշխատանքության կուլտուրական-գեղարվեստական դաստիարակության գործին: Բոլորովին անփորձ սիրողներից մի խումբ կազմելով յեւ կուլտուրական-սեխնիկական հսկայական դժվարություններ հաղթահարելով, սկսում է Դիլիջանում ու նրա Երջակա գյուղերում ձեռքար ներկայացումներ կազմակերպել: Նա մի կերպ կարգի յե գցում Դիլիջանի ակումբի բասերաբեմը, վորի դեկորացիաներն արդեն գոն էյին գնացել դաշնակցական Սեպուհի զինվորների վոսներին՝ դառնալով նրանց փառաբանները: Հասմիկը իր խմբի հետ միասին մի քանի գյուղերում հնամառ պարկերից ու փայտերից փոքրիկ բեմեր է կառուցում: Այդ գյուղերը դեռեւս բասրոնի յերես յեյին տեսել: Ցրտուց անուանը Դիլիջանից դեպի գյուղերը վոսնով Երջապայող խմբի ներկայացումները դարձել էյին գյուղացիների անհուն խանդավառության առարկան: Հասմիկը յեւ՛ ռեժիսյոր էր, յեւ՛ բեմահարդար, յեւ՛ գրիմյոր, յեւ՛ դերակատար, յեւ՛ հանդիսականներին պիեսների բովանդակությունը բացատրող: Հեղկումը խորապես գնահատում էր նրա անձնագոհ աշխատանքը:

Թիֆլիսում ապրող գավակների խնդիրով նա 1921 թ. մեկնում է այնտեղ: Թիֆլիսում գործող դերասանական խմբի առաջարկը մերժելով նա մտնում է Վրաստանի խորհրդայնացումից հետո կազմակերպված նոր բասրոնի (մեծ մասը յերիտասարդ ընկերներից կազմված) խումբը յեւ կրկին մեծ վոզեվորությամբ սկսում աշխատել նորաստեղծ ձեռնարկում: Այդ նոր բասրոնը վասակավոր ռեժիսյոր ընկ. Լեվոն Քալանթարի գլխավորությամբ աշխատող Շահումյանի անվան բասրոնն էր: Խորհրդային, նոր հայ բասրոնի գաղափարը համակել էր նայել Հասմիկի վոզեյությունը:

1921 թ. ամառը Հասմիկը այդ բասրոնի խմբի հետ մեկնում է Յերբեվան: Յերբ Յերբեվանում պեսական բաս-



րոն կազմակերպելու խնդիրը վորոշվում է, Շահումյանի անվան բասրոնի խումբը Հասմիկի հետ միասին (1921 թ. աշնանը) դառնում է Յերբեվանի առաջին Պեսական Թասրոնի ստեղծագործական ուժերի միջուկը:

Հասմիկն այսու, ահա, մոտ 15 տարի յե, ինչ առանց ընդհատումների աշխատում է Յերբեվանի Պեսական Թասրոնում: Այդ բասրոնի զարգացման ու բարգավաճման ընթացքում նա իր ընկերների հետ միասին շատ խոշոր դեր է խաղացել: Ականավոր դերասանուհու յերկրորդ տասնհինգ տարվա ստեղծագործական կյանքը պինդ արմատներով կապված է այդ բասրոնի վոզեյ կյանքի հետ, նա միշտ ապրել է այդ բասրոնի հասարակական յեւ գեղարվեստական բոլոր իրադարձություններով, վոզեվորվել նրա հաջո-

ղություններով, յիսել նրա ստեղծագործական դժվարությունների պահերին: Նա իր գարծունեությամբ միշտ բարձր է պահել խորհրդային բասրոնի վարկը: Խորհրդային բասրոնին մասուցած նրա բեղմնավոր աշխատանքները նկատի ունենալով 1927 թ. ՀՍՍՀ-ի Կենտրոնական կոմիտեի կողմից նրան շնորհում է հանրապետության վասակավոր դերասանուհու պատվավոր կոչումը: Իսկ 1935 թ. մեր կառավարությունը տեսնելով նրա հետագա տարիներում կատարած անկասկածելի աշխատանքը (բասրոնի յեւ կինոյի արտադրության բնագավառում), նրան շնորհում է ավելի բարձր մի կոչում, այն է՝ հանրապետության ժողովրդական դերասանուհու կոչումը:

Հասմիկը վոզե միայն մեր յավագույն ստեղծագործական ուժերից մեկն է, այլ յեւ հասարակական ակտիվ գործիչ է: Յերբար տարիներ նա յեռանդուն կերպով մասնակցել է հասարակական գանազան կազմակերպությունների աշխատանքներին, վորի համար նա մի քանի անգամ արժանացել է պատվո գրերի յեւ շնորհակալական գրությունների: Նա այսու արդեն վեցերորդ տարին է, ինչ Յերբեվանի Քաղխորհրդի ակտիվ անդամ է (Լուսանկցիայում):

Հասմիկը 1925 թ. ամենագործոն մասնակցությունն է ցույց տվել նայելով Հայկիմոյի գեղարվեստական արտադրական աշխատանքներին: Նա նկարահանվել է սասից ավելի ճիշտներում: Նա մի քանի հոգու հետ միասին իր ուսերի վրա կրել է Հայկիմոյի գեղարվեստական ճիշտների ստեղծագործական պատմությունը: Կինո հասարակայնության քաջանում նա ամենագնահատված դերասանուհիներից մեկն է, վորի յուրաքանչյուր խաղացած դերը, յուրաքանչյուր գեղարվեստական պատկերն արժանացել է առանձին ջերմ ուշադրության: Նրա համբավը կինո աշխարհում ավելի յե՛վա բարձրանում է, յերբ յույս է տեսնում «Պեպո» նշանավոր հնչուն ճիւղը, վորտեղ Հասմիկը, ինչպես հայտնի յե, խորը տաղանդի շնչով յե՛վ հմայիչ վարպետությամբ կերտել է Շուշանի տիպը:

Հասմիկն իր 30 տարեկան ստեղծագործական հարուստ գործունեության ընթացքում մոտ յերկու հարյուր դերեր է կատարել: Նրա դերացանկը բազմաճյուղ է: Նրա ստեղծագործության նյութ են յեղել յե՛վ յե՛վրոպական, յե՛վ ռուսական կլասիկները, յե՛վ յե՛վրոպական ժամանակակից դրամատիկական յերկերը, յե՛վ յուրօրինակ սարբեր ազգությունների դրամատիկական զանազան գործերը:

Չափազանց աննշան թիվ են կազմում այն հայ հեղինակների պիեսները, վորոնց ներկայացումներին Հասմիկը մասնակցություն չի ունեցել: Հայ գրականության դասական յե՛վ ժամանակակից յերկերում էի չէն այն դերերը, վորոնց կատարման մեջ Հասմիկը մինչե՛վ հիմա գրեթե մրցակից չի ունեցել (որինակ Սունդուկյանի յե՛վ Շիրվանզադեյի սի քանի պիեսներում): Այդպիսի ներկայացումներն առանց նրա մասնակցության այսու անհնարին է թվում:

Ժողովրդական դերասանուհի Հասմիկը ոժտված է բեմական շատ խորը ընդունակություններով: Նրա ստեղծագործական կյանքը չափազանց հետաքրքրական է յե՛վ ուսանելի մեր արվեստի աշխատողների համար: Սակայն այդ խնդրի առթիվ հաջորդ հոդվածում ավելի հիմնավոր խոսք կապի Հասմիկի հետ յերկար տարիներ աշխատած վասակավոր ռեժիսյոր ընկ. Լեվոն Քալանթարը:

Ս. ՄԵԼԻՔՍԵՏԻԱՆ



## ՀԱՍՄԻԿԸ ԹԱՏՐՈՆՈՒՄ

«Մինչե՛վ շենքը չտեսնես, նրա լավն ու վատը չես իմանա» — ասում է ժողովրդական առածը: Այս առածի իմաստն այն է, վոր գեղարվեստական կառուցվածքը, գեղարվեստական յերկը աննկարագրելի յե: Սակայն շենքը յե՛նթարկվում է մաթեմատիկական չափի: Յերթ նկարագրությունը չի բավարարում, հնարավոր է, չափի յե՛վ հաշվի միջոցով, վերականգնել թեկուզ շենքի մոդելը, վորը բավական լի՛վ գաղափար կհա «լավն ու վատի» մասին:

Թատերական ստեղծագործությունը վոչ միայն աննկարագրելի յե. այդ ստեղծագործությունը նայելով անկրկնելի յե: Մի շարք թատերական խոսք գործիչների մասին անպակաս են միանգամայն լի՛վ տեղեկություններ ու

նկարագրություններ, սակայն միայն հմուտ մասնագետը, շատ բարդ անալոգիաների միջոցով, կարողանում է հեռավոր մի գաղափար կազմել սվյալ բեմական գործի արվեստի մասին, իսկ լայն հասարակության համար այն թատերական արվեստը, վորին դիտողն ինքը անմիջական ակնդիր չի յեղել, մնում է յոթնապատիկ կնկված, հավիտ փակված մի դուռ:

Այսպիսով, բնավ հավակնություն չունեմ իմ այս ակնարկով բավարարություն տալու այն ընթերցողի հարցափորձանք, վոր ինքը հաջորդակից չի յեղել Հասմիկի ստեղծագործությանը, յե՛վ գործն կատարած կհամարեմ, յերթ ինձ, վոր հետե՛վել էմ Հասմիկի առաջընթացին, նրա առաջին փայտից յե՛վ մինչե՛վ որս, հաջողվի ոգնել ուշիմ դիտողին՝ թե հետևյալ յե՛վ սեփական, անուշտ, հարուստ սպավորությունները Հասմիկի վերին աստիճանի ինքնատիպ արվեստից յե՛վ թե գոհացուցիչ կովան ունենալու՝ յե՛վ այդ սպավորությունները համակարգելու համար:

Ասացի՛ ի ն ֆ ն ա ս ի պ: Յե՛վ դա քերե՛վս ամենաբնորոշն է Հասմիկի բեմական կերպարանքի մեջ:

Իր բեմական գործունեությունը Հասմիկը սկսել է հայ թատրոնի այն շրջանում, յերբ իրենց ուժերի առավելագույն ծաղկումն էյին ապրում այնպիսի խոշոր դեմքեր, ինչպես՝ Սիրանույշ, Արեւյան, Պետրոսյան, Մայսուրյան, Արամյան, Վրույր, յե՛վ դեռե՛վս վոչ մի թիզ չեր գիջել իր կորովից Սունդուկյանական գվարդիան՝ Վարդուհի, Տեր-Գալթյան, Հարությունյան յե՛վ ուրիշները: Յե՛վ այդ վո՛ր խիզախ յերիսասարդն էր, վոր ուժ ու տկունություն կունենար չենթարկվելու նրանցից վորե՛վէ մեկի, յերե՛ վոչ մի ֆանիսի, ուժգին ազդեցությամբ: Ահա Շահխաթունին — Արեւյանի յերկրորդ հանրամասչելի հրատարակությունը, ահա Սեփոււմյանը — Պետրոսյանի գիծը յիովին շարունակողը, ահա սաղանդավորագույն Զարիճյանը՝ իր նախորդների հարուս ժառանգության մեջ խնողված եկրեկսիկը:

Կան արվեսագետներ, վորոնց հրապարակ գալը շուրջնալից է լինում հանկարծ, ասուպի պես փայլում են յերկնականարի վրա յե՛վ կամ իսկույն գրավում են իրենց պաշտան տողը, կամ, հենց ասուպի պես էլ, անհետանում են:

Այդ տիպի արվեսագետ չէ Հասմիկը:

Զունենալով անհրաժեշտ արտաքին նախադրյալներ շուրջնալի ու աղմուկի համար, համեստներն ու անվստահ վոսֆ դրեց նա բեմի տախտակամածին, յե՛վ նրա առաջին ֆայլերը դողողոջ յե՛վ անհաստատ էյին:

Ո՞վ կարող էր այն ժամանակ կռահել, թե ի՛նչ ույծ է թագնված խուլ ձայնով, նիհար այդ կնոջ մեջ:

Իր ավագ յե՛վ թե հասակակից խաղընկերների հուժկու այդ շրջապատի մեջ (անունները ֆիչ առաջ թվեցի), ուր վոչ վո՛ւ մտահոգված չեր թե կանի՞ արդյո՞ք յերիսասարդ դերասանը յե՛վ կամ առաջանում է արդյո՞ք փոխանորդների մի նոր սերունդ, սկսնակ Հասմիկը, ապավինելով բացառապես իր բնագոյի յե՛վ հոստություն վրա, յերեւալով ու խաբխափելով, սկսեց դանդաղորեն, բայց հաստատ, կարիլ առ կարիլ կուսակել անհրաժեշտ փորձը:

Յե՛վ ամենից զարմանալին ու ուշագրավն է, վոր նա չազդվեց այդ հուժկու շրջապատից այն իմաստով, վոր չդարձավ ավագներից յե՛վ վոչ մեկի եպիգոնը, անգամ



սուկ արտաքին տեսիլակայի մեջ չընդորինակեց նրանցից յե՛վ վոչ մի ձե՛վ:

Հայ թատրոնը այն ժամանակ միասնական կերպարանք, միասնական վոն չուներ, պարզապես բազմավոն էր, սակայն նրա թե՛ բովանդակության, թե՛ նամանավանդ արտահայտչական ձե՛վերի մեջ գերիշխողը ուժանիկական պարե՛տիկան էր, վորի ակունքները գտնելու համար պե՛տ է հետավոր համբորդություն կատարել մինչե՛վ Ադամյանի ուրերը:

Հայաստանի խոստումն ընդհանրական դաժանորեն ունալ իրականության ծոցից՝ ֆաղափ յեկած գեղջկուհու առողջ բնագոյն ու հոստությունն ոգնեցին Հասմիկին գրեթե բոլորովին գերծ մնալու հայ թատրոնի այդ գերիշխող վոնից: Հասմիկը որգանապես խորում էր նրանից, յե՛վ

էլ ավելի դժվարանում էր նրա գործը, իր ստեղծագործական համբան գտնելու գործը:

Սակայն «բնագոյն ու հոստությունը» կարող են հուսալի ուղեկիցներ լինել մինչե՛վ վորոշ ժամանակ: Յե՛վ իրո՞ք:— Հասմիկի գործունեության առաջին շրջանում անտուրես տեղի յե՛ ունենում նրա անը, սակայն սուր վերիվայրումներով: Այդ շրջանում նա խաղում էր յերկրորդական նշանակություն ունեցող յե՛վ կամ եպիգոնիկ դերեր: Այդ դերերում ունենում է ուշագրավ հաջողաններ, արդեն իսկ գծագրվում են Հասմիկի ապագա ցայտուն ունալիսական արվեստի կոնտուրները, սակայն նախ այդ հաջողանները դեռե՛վս շատ հեռու են վորակական այն բարձրությունից, վոր վստահություն ներե՛նչեր թե անում է խոշոր մի դերասանուհի, յե՛վ ապա՛ հաջողաններին յերբեմն հաջորդում էյին նայե՛վ դժգույն դերակատարումներ: Դիպեկսիկական մի թոխիք էր անհրաժեշտ: Հենց դա յեր, վոր պիտի վորոշիչ հանդիսանար՝ Հասմիկի խոշոր դերասանուհի դառնալու հնարավորությունների համար:

Հասմիկը ունակ յեղավ այդ թոխիքը կատարելու: «Բնագոյի ու հոստության» կուսակումը, ձե՛տ բերած

փորձի խորացումն ու գիտակցումը, մի նոր վորակ ա-  
ռաջացրին Հասմիկի ստեղծագործական ինստիտուտի մեջ,  
մի նոր ունակություն—այն, ինչ կոչվում է ստեղծա-  
գործական ինստիտուտ:

Այնուհետեվ յեվ մինչեվ որս էլ ինստիտուտի Հասմիկի  
ստեղծագործության խարխիսն է:

Սկսվում է Հասմիկի բեմական գործունեության յերկ-  
րորդ օրանը (խրոնոլոգիայես դա համընկնում է մո-  
սավորապես 1912—1919 թվականներին): Հասմիկն ար-  
դեն գրավում է իր վորոշակի տեղը հայ դերասանական  
ընտանիքի մեջ: Մեկը մյուսի հետեվից նա ստեղծում է  
մի շարք բեմական կերպեր, վորոնցից մի քանիսն արդեն  
իսկ անգուգական համարվեցին ժամանակակից ֆենա-  
դասության յեվ հասարակական կարծիքի կողմից:

Առանձնապես վառ է հիշողությանս մեջ այդ օրա-  
նից նրա Զառնիբանը («Զար վոգիմ»), Շպպանիկը («Նա-  
մուս»), Եփեմիան («Պեպո»), Սիրվարդը («Գասասան»),  
Դայակը («Հեֆյաթ»), Մայրը («Ժառանգություն»), Վա-  
սիլիսան («Հասակում»), խելագար կինը («Կախարդուհի»)  
յեվ մի շարք այլ դերեր:

Ինստիտուտի ույժը մի կողմից, ծայրահեղորեն զար-  
գացած դիտողականությունը մյուս կողմից ոգնում էին  
Հասմիկին՝ իրարից յերբեմն տրամագծորեն տարբերվող  
այդ տիպերից յուրաքանչյուրի մեջ գտնել ամենից հաս-  
կանականը, ամենից բնորոշը, յեվ իր գրած այդ ա-  
ռանցքի շուրջը հյուսել մի քան գունեղ, մի քան հարազատ,  
մի քան նեմարիտ մտղկային կերպեր:

Ասացի՛ հարազատ ու նեմարիտ: Այդ շատ կարեվոր է:  
Սոսկ ինստիտուտի վճանգներ է պարունակում իր մեջ  
յեվ կարող է շատ մոլար համբաներով տանել ստեղծա-  
գործողին:

Կենսահարազատության ու կենսանեմարտության ուժգ-  
նորեն զարգացած զգացմունքը փրկում էր Հասմիկին  
այդ վճանգներից: Դրա շնորհիվ է, վոր Հասմիկը մի քան  
էլ մնում է իրական կերպերի օրանակում յեվ դրանից  
է, վոր Հասմիկի կերտած տիպերը մի քան ռեալ են յեվ  
մի քան համոզիչ:

Մի վճանգից յեվա—յեվ դա դերասանի համար ամե-  
նատակալի վճանգն է—կարողացավ խուսափել Հաս-  
միկը առաջին իսկ օրերից յեվ մինչեվ որս: Դա շատ  
պարզ է, կլիշե է:



Դերասանների, նույնիսկ լավագույն  
դերասանների մեծ մասը իրենց ստեղ-  
ծագործական պրակտիկայի ընթացում  
սկսում են հետզհետե գերվել իրենց  
արվեստի տեխնոլոգիայի կողմից: Հա-  
մանման բեմական դրությունների, հա-  
մանման զգացմունքների, համանման  
փոխհարաբերությունների դրսեվորման  
համար ձեվեր վորոնելու պրոցեսը  
հետզհետե բացնում է դերասանի մեջ  
զգոնությունն ու գիտակցությունը, վոր  
յուրաքանչյուր նոր դեր նորանոր խըն-  
դիրներ է դնում նրա առաջ, ամեն  
մի կոնկրետ դեպքում պահանջում է  
նույնչափ կոնկրետ մոտեցում: Արվես-  
տին փոխարինում է արհեստը: Դերա-  
սանը այլևս հոգնություն չի տալիս  
իրեն՝ նոր վորոնումների ձեռնարկելու  
եվ իր պրակտիկայի շեմարանից

դուրս է բերում պատշաճի, արդեն ոգտագործված ձեվեր  
ու յեղանակներ, յեվ ահա կենսաբարձր ստեղծագործու-  
թյան փոխարեն հրապարակ են գալիս պատշաճի կա-  
ղապարներ, պատշաճի դիմակներ: Այդ պատշաճ, վոր ին-  
նին արդեն վոչ այլ ինչ է, բայց յեթե արվեստի բացա-  
սում, փաստական ինֆրամոտում, տարաբարձար շատ  
տարածված պիտ է, վորից գերծ չեն մեր մի շարք առաջ-  
նակարգ դերասանները. անգամ—յեվ դա ամենից ցա-  
վալին է—խորհրդային ժորմացիայի դերասաններ:

Ով առիթ ունեցել է աշխատել Հասմիկի հետ, շատ լավ  
գիտե թե պիտաների սկզբնական փորձերին վորքան դրժ-  
գույն, անհետաքրքիր է լինում Հասմիկը, պարզապես  
նմանվում է անվարժ աշակերտուհու:

Ուշիվ յեվ զգայուն ռեժիսյորը իհարկե չի անապարի-  
ներխուժել Հասմիկի փնտրումների մեջ յեվ չի բռնա-  
նա նրա հոգու վրա, վորովհետեվ քաջ գիտե, վոր արտա-  
նապես անարտահայտիչ այդ փորձելանքի հետեվում կա-  
տարվում է յեռուն ստեղծագործական աշխատանք: Մի  
շարք դժգույն փորձեր—յեվ հանկարծ, որերից մեկ որ,  
հերքական փորձին, կատարվում է թոխյր, Հասմիկը  
սկսում է առկայծել բազմազան գույներով,— դա նշա-  
նակում է, վոր դերը կերտելու առաջին հիմնական ետա-

պը հաղթահարված է, բեմական կերպը խմորվել է, դերասանուհին գտել է հասկանալի և ու ինդիվիդուալը սվյալ դերի մեջ յեվ այժմ այդ գրածը կսկսի կաղապարվել մտով յեվ արյունով, միտք նոր, դեռեմս չոգսագործված յերանգներով: Ահա գաղտնիք՝ թե ինչու Հասմիկի արվեստը այդչափ բազմակողմանի յե, ահա ինչու նա ընդունակ է սրամագժորեն հակոսնյա սիպերը կերտել միյեվնույն հաջողությամբ:

Իր գործունեության յերկրորդ այդ քաջանի վերջում Հասմիկն արդեն կազմակերպված դերասանուհի յե յեվ, թվում էր թե՛ այլեմս նրան մնում է միայն ամրացնել իր ստեղծագործական դիրքերը յեվ թե այլեմս—մի նոր վորակական անման սպասելիքներ չկան: Յեվ իրոք՝ հին հայկական թատրոնի պայմաններում, յեթե մի դերասան, չունենալով վոչ ընդհանուր, վոչ մասնագիտական նախնական պատրաստություն, ապավինած իր սեփական ուժերին, կարողացավ ձեռք բերել վերը թվածս հասկությունները, ապա մանր-բուրժուական կենցաղով ու իդեոլոգիայով հագեցած հայ դերասանական ընթանիքի քաջանակում, Հասմիկի ձեռք բերածը առավելագույնն էր, — ամենաբարձր, ինչ դեռ կարող էր տեսնել — դա ֆանտաստիկ վորոշ անումն էր, այսինքն նույն ստեղծագործական մեթոդով ու բովանդակությամբ կերտած մի ֆանի նոր սիպեր:

Հոկտեմբերյան հեղափոխությունը յեվ անդրկովկասյան հանրապետությունների խորհրդայնացումը՝ իր դերասանական արվեստի լրմանը գրեթե ընդհուպ մոտեցած Հասմիկի, ինչպես յեվ մի բարձր այլ թատրոնական գործիչների համար, հանկարծ բացին նոր հեռանկարներ, նոր խնդիրներ, նոր, լայնարձակ հորիզոններ:

Անցյալում Հասմիկը միտք էլ մի տեսակ որգանական հակումն ուներ դեպի դեմոկրատականը, դեպի լայն ժողովրդականը:

Նրա կենսագրությունից հայտնի յե, վոր նա չբավականացավ հին հայ դերասանի մագիստրալ հունով, այսպես ասած՝ պատճենական հայ թատրոնով, այն է՝ Թիֆլիսի Հայկական Գրամատիկական Ընկերության խմբի մեջ ունեցած գործունեությամբ, այլ յեվ նույն չափով յեվ բարձր արվեստի ջերմ նվիրվածությամբ աշխատում էր Թիֆլիսի Ժողովրդական Տան հայկական սեկտորում:

Այստեղ Հասմիկը իրեն գգում էր, ինչպես ձուկը ջրի



մեջ, այստեղ նա իրեն սերտորեն ձուլված էր գգում ժողովրդական Տան դեմոկրատ հանդիսատեսի հետ, այս վերջինն էլ, իր ներքին, գգում յեվ գիտակցում էր՝ իր գեղարվեստական դաստիարակության գործին այնքան նվիրված դերասանուհուն ու ջերմորեն սիրում էր իր Հասմիկին:

Դեմոկրատական այդ «ցնդարանությունները» համար Հասմիկը մի վորոշ քաջանում նույնիսկ հալածանքի յենթարկվեց հայ թատրոնի «մեծամեծների» կողմից, վորոնք բավապահներ էյին ներյուրում, իբրեվ թե Հասմիկը այն պատճառով է գերադասում ժողովրդական բեմը, վոր այդտեղ արվելի հնարավորություններ ունի պատասխանատու - առաջնակարգ դերեր խաղալու:

Այդ հալածանքը չէր ընկնում Հասմիկին: Յերբեմնի գեղջկուհու առողջ բնութքը չէր թողնում մրազնվելու նրա մեջ այն գիտակցությունը, վոր այդ համբան հիտք ու իսկական համբա յե իր համար:

Այդ գիտակցությունն էր, վոր հետագայում ունակ դարձրեց Հասմիկին ամբողջովին, առանց վորեվ մնացորդի, համակվելու խորհրդային նոր թատրոնի գաղափարով: Այդ գիտակցությունն էր, վոր թելադրեց Հասմիկին ֆաղափացիական կովի ժամանակ, Գիլիջանի քաջանում, ստանձնելու կարսիր բանակայինների յեվ ապսամբ վայրերի գյուղացիների համար թատրոնական ներկայացումներ կազմակերպելու գործը—յեվ դա այն ժամանակ, յերբ դեռ վորոշում էյին քնդանոթներն ու գնդացիները, յերբ համասարած սով էր, ցուրտ ձմեռ: Նա ինքը, մեկ-մեկակ, սուկ իր ուժերին ու բնագրին ապավինած, ձյունաթաղ լեռներում ֆայրում էր գյուղե-գյուղ ու իր ջերմ արվեստի լապսերով լուսավորում դարերով սրկացած հայ գյուղացուն: Յեվ, վերջապես, նույն այդ գիտակցությունն էր, վոր թելադրեց Հասմիկին, Խորհրդային Հայաստանի կառավարության առաջին իսկ կանչով, մի ֆանի ենտագիտությունների հետ միասին, ամբողջապես նվիրվելու խորհրդային հայ թատրոն ստեղծելու գործին:

Նոր հնարավորությունների ու նոր հեռանկարների մի լայն համբա բացվեց Համիկի համար:

Առերեմույթ իր ստեղծագործական լուսին հասած դերասանունին նորոգ բողբոջեց, նրա արվեստը սկսեց հագեցնալ նոր ավյունով, վորի աղբյուրն էր հայ բաս-րոնի նոր հանդիսաստը. նոր յերանգներով, նոր սլա-ցումներով սկսեց առկայծել Համիկի սաղանդը:

Սակայն խնդիրը միայն այն չէ, վոր Համիկը խոր-հրդային բասրոնում իր դերերի ռեպերտուարը ավելացրեց մի շարք նոր սիպերով յե՛վ կերպերով, կամ թե իր առաջ-վա խաղացած դերերը, վերակրկներով խորհրդային բաս-րոնում, նորանոր հարուս գծերով յե՛վ վառ գույներով է՛լ ավելի խսացրեց: Այդ անուստ սեղի ունեցավ յե՛վ դա իննինն արդեն արժեքավոր յերեմույթ է Սակայն խնդիրն այն է, վոր իր ստեղծագործական մեթոդի մեջ Համիկը մտցրեց մի կարեւորագույն, հիմնական կորեկսիվ, վորի շնորհիվ նրա ստեղծագործական վոնը մի նոր վորակ ստացավ:

Համիկի արվեստը միշտ էլ ռեալիստական արվեստ էր ըստ ամենայնի: Սակայն իր ստեղծագործության մեջ յերակեց ունենալով իր շատ զարգացած դիսոդականու-թյունը, Համիկը կերտում էր բեմական կերպերը՝ դիտե-լու կամ ինսուլիցիայի միջոցով գրած կտորներից, վորոնք, շողալով իրար հետ, թեյե՛վ միշտ էլ վորոշ ամբողջա-կանություն էյին կազմում, սակայն այդ ամբողջակա-նությունը սարածուն ամբողջականություն էր, վորի մեջ կենցաղայինը, հանախակի՝ էսնոգրաճիականը, յեթե գե-րակեռողը չէյին, սակայն շատ ուժեղ էյին:

Համիկը կարծես բնագործն զգաց, վոր խորհրդային դերասանի համար այդքանը քիչ է, վոր խորհրդային դե-րասանի արվեստը պե՛տ է նպասակապայցիկ լինի:

Ինչպես միշտ, այս անգամ էլ, առաջացած նոր խնդի-րը, նպասակապայցության խնդիրը Համիկը յուրովի լուծեց յե՛վ այդ լուծման մեջ նրան շատ ոգնեց իր ան-դավանան առողջ բնագործը:

Ներկայացման ընդհանուր նպասակապայցումը, նրա իդեական, սոցիալական հագեցվածության խնդրի լու-ծումը համարելով ռեժիսյորի գործ յե՛վ իննն էլ լիովին տրամադրելով իրեն ռեժիսյորին՝ իր բեմական կերպը, մյուս դերակասարների հետ յե՛վ կամ ներկայացման ընդ-հանուր դիրավորման հետ շողկապելու համար, Հաս-



1009  
39757

4017

միկն իր գուտ դերասանական աշխա-սանքի համար զտավ մի նոր մեկնա-կեց: Յուրաքանչյուր սիպի մեջ նա սկսեց փնտել այն, ինչ կարելի յե անվանել «սվյալ մարդու հեմարսու-թյունը»:

Յեթե ուշադիր ու փորձառու աչքով դիտելու լինենք Համիկի վերջին 15 տարվա ընթացում ստեղծագործած դերերը, ապա կսեսնենք, վոր նրա պակեթած յուրաքանչյուր անձնավո-րությունը ունի մի հիմնական հեմար-սություն, իր կյանքի հեմարսությունը, վորի համար նա, այս կամ այն ձե-վով, պայքարում է շրջապատի հետ:

Ահա այդ «կյանքի հեմարսության» շուրջը, հանուն այդ հեմարսության գոյության պայքար մղելու շուրջն է Համիկը հյուսում իր ստեղծագործու-թյունը:

Դա կասարյալ մի գյուտ էր Համիկի համար, կենսա-րար մի գյուտ:

Այդ գյուտը ոգնեց Համիկին վերջնականապես կա-ղապարելու իր արվեստը, մաքրեց այն սահուն եմպի-րիզմի տարրերից, ազատագրեց կենցաղային յե՛վ էսնո-գրաճիական բեմավածությունից յե՛վ լիովին ու վերջնա-կանապես ֆայլեցրեց նրան մեր ուրերի ռեալիստական արվեստի լայն պողոտայով:

Ահա այդ նոր ձե՛վով են հյուսված Համիկի գործու-նեյություն խորհրդային շրջանի դերերը—յե՛վ Կնիրսիյեն (Հուլյի կործանում), յե՛վ Վիսսիլսենը (Չրատույզ զանգ), յե՛վ Մարթան (Աննա Քրիստի), յե՛վ Մայրապետը (Յեգոր Բուլըչե՛վ), յե՛վ Կարանիլյան (Ամպրոպ), յե՛վ Սամիլերին (Սարաբալա), յե՛վ Սիրվարդը (Դասասան), յե՛վ Շուշա-նը (Պեպո) յե՛վ բազմաթիվ այլ դերեր:

Շատ քուցիկ կերպով, ուրվագծորեն, նեցցիկն Համի-կի դերասանական համբան: Յերկար, վոյորուն համբա յեր, բայց յե՛վ վերին ասիճանի հետաքրքրական ու ուսա-նելի:

Մեր դերասանական նոր սերունդը շատ յե՛վ շատ բան ունի ժառանգելու Համիկից: Այդ սերունդը բախսա-



վոր և նրանով, վոր մասնված չէ ինքնահոսի, ընդհակառակը շատ ջերմ հոգացողության առարկա չէ, նրան չեն սպասում Համիկի անցած վորումն ուղիները, սակայն մի բան մեր յերիսասարդությունը պե՛տք է լավ գիտակցի, — յե՛վ Համիկի անցած ուղին շատ կնպաստի դրան, — վոր հոգացողությունն ու փայփայանքը չեն ազատում արվեստագետին անհասական լուրջ յե՛վ խորը ինքնադաստիարակման յե՛վ անհասական ուրույն հանապարհներ վորոնելու ու հարթելու ծանրագույն, բայց յե՛վ շատ արդյունավետ աշխատանքից:

Ավարտելով այս թուղթիկ ակնարկս, կուզեյի Համիկի ստեղծագործական աշխատանքի մի կարեւոր կողմի վրա ել դարձնել ընթերցողի յե՛վ մանավանդ դերասան ընթերցողի ուշադրությունը:

Դերասանի ստեղծագործական աշխատանքը անավարտ է յե՛վ նրա կերտած տպը համոզիչ չէ— յեթե դերասանը չգարգացնի իր մեջ մի կարեւոր ունակություն, վոր լիովին զարգացել է իր մեջ Համիկը:

Դա հավասարում ունակությունն է:

Համիկն այդ իմաստով անզուգական է— յե՛վ դա նրա արվեստի թերեմա գլխավոր ույժն է: Նա, սիկնիկ կամ ձի խաղացող մանուկի պես, միամիտ անկեղծությամբ հավասում է իր կերտած տպին, հավասում է այն բոլոր սիտուացիաներին, վորոնց մեջ զննվում է այդ տպը, նրա ապրումներն ու խորհումները դարձնում է իր սեփական ապրումն ու խոհը յե՛վ, վերջապես, անվերապահորեն հավասում է բեմի վրա իր ասածի ու արածի կարեւորությանը, մահու յե՛վ կենաց չափի անհրաժեշտությունը:

Ահա հավասարում այդ ունակությունն է, վոր այնքան համոզիչ է դարձնում Համիկին հանդիսատեսի աչքում յե՛վ այնքան ոգնում է նրան բոլորովին կերպարանափոխվել գրեթե յուրաքանչյուր իր խաղացած դերում:

Հիշենք նրա Մայրապետը «Յեգոր Բուրջեվում»: Ո՞վ կհավաստ, յեթե կյանքում չի տեսել Համիկին, վոր այդ դերը խաղացող դերասանուհին նրա մարմնով, միջին հասակով, մարմնի նուրբ գծագրությամբ, համեստ մի կին է: Դաժան Կարանիխայի դերակատարու՞մը դիտելիս, մարդ չի հաշտվում այն մտքին, վոր խաղացողը վերին աստիճանի բարի, զավակասեր մի կին է: Դժվար է հավասար յե՛վ դժվար է հաշտվել, վորովհետե՛վ Համիկի դերակատարության յե՛վ վո՛չ մի վայրկյանում բասերա-



կան խաղ չի զգացվում, այլ առջե՛վդ կենդանի մարդ է, մտով ու արյունով ու ներքին դաժան ու այլանդակ կերպարանով:

Համիկը նախ ինքը հավասացել ու համոզվել է, վոր ոժտված է Մայրապետի կամ Կարանիխայի բոլոր հատկություններով, հավասացել է, վոր ամբողջ շրջապատը իրական շրջապատ է, հավասացել է, վոր այն, ինչ նա այս յերեկո, իր արվեստակիցների հետ սիտսին, կատարելու յե՛վ ասելու յեթեմի վրա, անխուսափելի յերկաթե մի անհրաժեշտություն է:

Դժվար թե Համիկը յերե՛վե գրադված լինի փիլիսոփայությամբ, սակայն յերբ նա տիկին Բաագեյի դերում («Բուրուս») նոռո՞ւմ շողակրատությամբ նառում է Անրի Բերգանի

մասին, հանդիսատեսը, նույնիսկ մասնավոր կյանքում Համիկին լավ հանաչող արվեստակիցը, լիովին հավասում է, վոր այդ կինը իրոք կլանված է Բերգանով:

Իսկ Համիկի գուլիս գործոց՝ Վիսսիխենը (Ջրասույզ զանգը): Վո՞ր հանդիսատեսը սարսուռ չի զգացել այդ հուժկու արարածից, վոր այնքա՞ն ձուլված է բնության, անզամ կարծես հենց ինքը միլիոնադար բնությունն է: Յերբ Վիսսիխեն—Համիկը, թափահարելով իր ցուպը, դիմում է գերմանական հեթանոսական Տոր աստծուն յե՛վ արհամարհանով ու նախասինով բացականչում է՝ «Ա՛յ տա, շա՛տ Տոր, ելի եդ իժանդ եկա՞ն. ի՞նչ են շա՛տ-շա՛տ պեժին տալի, յե՛վ այլն..», լիովին հավասում էս թե այդ Տորի գոյությանը յե՛վ թե Վիսսիխենի արհամարհանքին անզամ դեպի այդ հզոր ասվածը: Յե՛վ յերբ քիչ հետո Վիսսիխեն—Համիկը դիմում է վագոդ սկյուռին՝ «Մըկըձեռ-ջան, դու չուսն էս, չափուկ-չափուկ վո՛տ ունես, յե՛վ այլն», անվերապահորեն հավասում էս դաժան վիուկի յե՛վ անչար սկյուռի այդ շատ ինտիմ մտերմությանը, իսկ ամբողջ տեսարանի վերջում գրեթե ինքը ել համակվում էս պանթիսական որորով, զգում էս քեզ գերված հեյաքային այդ աշխարհի ուրույն տրամաբանությունից, վոր իր դերի ընթացքում նուրբ վարպետությամբ

հյուսում է դերասանուհին յեվ ապա, յերբ մեռնող  
Հայերիսի գլխին հնչում է նրա ձայնը՝ «Պրծավ»,—ապա  
այդ կարն յեվ ինքնին անբարեհնչյուն բառը թվում է  
եւզ վորպես դաժան ճասումի դողանց:


Հաժասալ ու հաժասացնել,—յերբ կուզեք, անա դերա-  
սանական արվեստի մոզական գաղտնիք:

Այդ դյուրիչ գաղտնիքին լիովին տիրապետում է մեր  
այսորվա հորեյար-մոզը՝

Հասմիկը:

Լ. ՔԱԼԱՆԹՈՒՐ





«Նամուս» — Շապուանիկ




«Հասակում» — Վահիխան



«Անհայտ կինը» — Ժակլինա



«Ջրասույզ Ջանգր» — Վիսսիլյան





«Վարդազար» Վարդունի



«Դասասան» Սերվարդ



«Ռեվիզոր» Աննա Անդրեյեվնա




«Հուլիսի կործանում» Կներսիկ



«Կամակոր կնոջ սանձահատումը» Կասարինե



«Խարաբալա»-ի մի Բանի դերակատարներ





«Խարալա» — Խամփերի




«Ինգա»





Կադր «Պեպո» հնչումն ֆիլմից



Կադր «Պեպո» հնչումն ֆիլմից



«Յեգոր Բուլբեկ» Մալբապե Մելանիա





Տեսարան «Ռեվիզոր»-ից



Տեսարան «Յերեմ յերգ»-ից



«Ռեվիզոր» — Աննա Անդրեյևնա (34 թ.)





«Հասակում» Վասիլիսա 33 p.




«Ֆիգարոյի ամուսնաբայանը» Մարտիկը






«Ինտրվենցիա» — Տիկ. Քսիդիսս



«Անպրոպ» — Կաբանիսա





«Շահնամե» — Սելվա-Խարուն քագուհին

## ՀԱՍՄԻԿԸ ԵԿՐԱՆԻ ՎՐԱ



Պերասանական բարձր արվեստի խոբոր վարպետ, աշխատավորական լայն զանգվածների կողմից հանաչված յեվ սիրված ժող. դերասանուհի Հասմիկն անփոխարինելի ույժ է վոչ միայն մեր քաղաքական արվեստի, այլ յեվ խորհրդային կինեմասոցրաճիայի համար:

Առաջին անգամ յերեվարով եկրանի վրա 1925 թվին ժող. դեր. Հասմիկն անցած մի սանամյակի ընթացքում ձեռք է բերել մեծ ժողովրդականություն վոչ միայն Հայաստանում, այլ յեվ վողջ Խորհրդային Միության սահմաններում: Նրա ստեղծած մոր սիպարը «Նամուսում», «Զար վոգում», «Ղուլում», «Յերկու գիշերում», «Սեվ քեվերում», «Գիտում» յեվ «Պեպոյում»

դիտել է բազմից անգամ լայնածավալ Միության բոլոր վայրերում. յե՛վ Մոսկվայում ու Լենինգրադում, յե՛վ Անդրկովկասում, յե՛վ Միջին Ասիական հանրապետություններում, յե՛վ Վլադիվաստոկում ու Մագնիսոգորսկում, յե՛վ Ուկրայնայում ու Բելորուսիայում, յե՛վ Կարելիայում, յե՛վ Զովաճիայում, յե՛վ Ղրիմում յեվ ամենուր: Ամենամասսայական արվեստներից՝ կինոն մասսայականացրել է մեծ վարպետի արվեստը նայելով արտասանական աշխատավորական մասսաների մեջ: Ամենուրեք հիացմունք յեվ գեղարվեստական մեծ հանույթ է պատճառել նրա ինքնաբուղիս, եմոցիայով հագեցված, ռեալիստական կատարումը:

Ժողովրդական դերասանուհի Հասմիկի 30-ամյա գործունեության հորելյանը տնում են նայել Հայաստանի կինոաշխատողները, վորոնց աչի առաջով վերհիւճան կարգով անցնում են նրա կերտած անմոռանալի պատկերները՝ սիրող մոր, վճահար մոր, հուսահատ մոր, հեղափոխական մոր, ըմբոս մոր, բողոքող մոր, ընկեճված մոր... յեվ այսպես յեկար շարան հին կենցաղի մոր, հեղափոխության օրջանի մոր, մեր սոցիալիստական առույայի մոր:

Սա մի ամբողջ գալերեյա յե անջնջելի պատկերների, վորոնք մոնումենտներ են մեր կինո արվեստի գանձարանում:

Ո՞վ կարող է մոռանալ Հասմիկի Մարիամ բաջին («Նամուս»): Առաջին անգամ լինելով որչեկսիվի առաջնա կարողացել է ստեղծել չփափորության մեջ ապրող վեսահար մոր սիպը՝ սալով առանձնապես հուզիչ կասարում Սեյրանի ծեծվելու ու ինքնասպանության ճեսարաններում: Առանց խոսքի ուժի, լոկ իր հարուստ միմիկայով յեվ շարժումներով դեր. Հասմիկը կարողանում է մեր մեծ վիպասանի ստեղծած մոր պատկերը դրսևվորել եկրանի վրա ռեալիստական պրիմներով ու սպավորել այն դիտողի մտապատկերների մեջ:

Նման սի յերկրորդ մոր պատկերը նույն հեղինակի վեպում ստեղծել է մեր դերասանուհին. դա Շուշանն է «Զար վոգում»: Դիտողի առաջ վառ գույներով պատկերվում է «ցավագար» Սոնայի մոր վեսահար պատկերը: Լվացք անելով մի կերպ նա պահում է իր միակ աղջրկանը, կարողանում է նրան ամուսնացնել: Սակայն յերկար չի սեվում նրա յերջանկությունը. «չար վոգով բռնված» Սոնային խեղդում են փուրու սակ: Դերասանական մեծ վարպետությամբ սաղանդավոր դերասանուհին սալիս է վեսահար, անոգնական մոր ապրումների բոլոր նյութանները. յե՛վ ուրախությունը, յե՛վ վիճը, յե՛վ հուսահատությունն ու անոգնականությունը:

Բոլորովին այլ մայր է Հասմիկը «Ղուլում»: Վեցից միսիցիզմի նիրաններն ընկած, արբեցողության գոհ դուլն է նա, վորն իր յերեխաների գոյությունը դառնակցության սիրապետության ժամանակ պահպանելու համար սիպված է լինում վանառել իր աղջկան, գցել նրան պոռնկության գիրկը: Սա Հասմիկի ստեղծած լավագույն պատկերներից մեկն է, ուր դերասանուհին հանդես է գալիս իր սաղանդի սեծ շնչով՝ սալով հուսահատ կնոջ ըմբոսացումն ընդդեմ սիրող կարգերի, ընդդեմ աստծո:

Գեղջկուհի մոր դերում է նա հանդես գալիս «Սեվ թեվի սակ» նկարում: Հասմիկն ամենայն հարագատությունը կերտում է Լոռվա մեր գյուղերի սակավախոս մոր պատկերը: Առանձնապես ուժեղ յեվ հուզիչ խաղ է սալիս նա իր վորդու ծեծվելու ճեսարաններում, յերբ



անոգնական կինը վեցից Ռոսում բեկի սան դարբան է չանկրում յեվ ուժասպառ գեթին սապավում:

Վորո՞ւ ժամանակից հետո դիտողը նորից ճեսնում է իր սիրած դերասանուհուն «Յերկու գիշեր» նկարում: Այստեղ նա արդեն այլ մայր է. դա այն գիտակից մայրն է, վորն իր ուժերի ներածին չափ ոգնում է դառնակցության դեմ մայիսյան որերին պայքարող բոլեվիկ վորդուն, վորը հաստատակամ է ու վնասական, վորն արի յե, հավատում է այն գաղափարին, վորին գոհվելու պատրաստ է իր վորդին, սակայն վորը միաժամանակ նայեվ բարի յե, սիրող, հոգասար: Իր այս վոյ այնքան մեծ դերում Հասմիկը նույնպես սպավորվում է դիտողի հիշողության մեջ՝ շնորհիվ իր ռեալիստական խաղի:

«Գիտ»-ում դեղիի դերում Հասմիկը գուսպ գույներով ու շքեխներով սալիս է թիվիստեցի կնոջ մարդկայնությունն ու հոգասարությունը դեպի սարաբախս Գիտորը՝ ոգնության գալով նրան ծանր ռոպեներին յեվ զսպելով իր վանառական վորդու յեվ չարսիք հարսի վայրագություններն ու հալածանքը դեպի գյուղից յեկած այդ միամիտ տղան:

Առանձնապես ուժեղ է ժող. դերասանուհին Շուշանի դերում («Պեպո»), ուր նա հանդես է գալիս իր սաղանդի լիվ դրսևվորումով: Մեր աշխատավորությունն արդեն հանաչում էր նրան վորպես լավագույն Շուշան բեմի վրա. այժմ դրան ավելացավ նայեվ Հասմիկի Շուշանը եկրանի վրա: Վորտան հուզիչ է նա Կեկելի յեկեղեցուց վերադառնալու, Զիմզիմովին անիծելու, Մեսեխի առաջ յեվ այլ ճեսարաններում: Խորհրդային Միության բազմաթեգու մամուլը, Ամերիկայի, Ֆրանսիայի, Տանկասանի յեվ այլ յերկրների թերթերը իգուր չե, վոր հասուկ ուշադրության են արժանացնում մեծասաղանդ դերասանուհու կերտած պատկերը, վորով, իրոք, արժանի յե մեր բասերական յեվ կինոարվեստի գալերեյայում գրավելու առաջնակարգ տեղերից մեկը:

Մեծ է ժողովրդական դերասանուհի Հասմիկի կատարած

րած դերը Հայաստանի կինոարդյունաբերության զարգացման գործում: Անմոռանալի յեվ անջնջելի յեն նրա ստեղծած մոր պատկերները: Սակայն ե՛լ ավելի խոշոր նվաճումներ են սպասում նրան գալիքի տարիներին բեմադրվող ժիլմերում:

Մեր անող կինո արվեստը իր վերելքի հանապարհին է գտնվում—յեվ նրա այդ վերելքի ուղիում առաջին շարքերում հաստատվելու է Բոլշևիկյան արվեստի բարձր դրոշմը: Անող կինո արվեստը մեր սիրելի, ստղանդավոր, բառիս ամենապայն իմաստով ժողովրդական դերասանուհի Համակը:

Գ. ԿՋՆՈՒՆԻ



Կար «Նամուս» Ֆիլմից




Կար «Նամու» Ֆիլմից



Կար «Դուր» Ֆիլմից



Կար «Զար վագի» Ֆիլմից





«Զար վոզի»



Կար «Ղուր» Ֆիլմից



Կար «Ազգանաւոր ջրվեժի մոտ» Ֆիլմից



Կար «Դիւր» Ֆիլմից






Կադր «Պեպո» հնչուն Ֆիլմից




Կադր «Պեպո» հնչուն Ֆիլմից



20 01

20 13



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿ



«Ազգային գրադարան»  
  
NL0123228

